

menische studien) կողուած ընդարձակ աշխատասիրութեան առաջին մասն . իսկ երկրորդը կէթթինկի Գիտութեանց արքունի ակադիմիային յիշառակա- զրութեանց հետ՝ նոյն տարւոյն 5 մայիս և 7 յուլիս ամսաթերթից մէջ . և որ յետոյ առանձինն ալ հրատարակուեցաւ : Գրուածքիս մէջ հեղինակը 2443 հայ բարից ստուգաբանութիւնն ընելով, 1726ը նոյն լեզուին յա- տուկ կը համարի . կ'ամփոփէ իւր կարծիք և զրութիւն լեզուին տարերաց վրայ . հաւաքում մ'ալ կը զնէ հայկեան կամ իրեն համար սկզբնատիպ բառից, ինչպէս նաև արշակունեաց (պահլաւ) և ասսանեանց : Այլ և այլ հաստուածներ ալ հրատարակած ունի ի Մittheilungen ուսումնաթերթու 1884, 87 և 91 տարիներու :

Շարայարելի

## ԴՐԱՆՍԻԼՈՒԱՆԻՈՅ ԵՂԻՍԱԲԵԹՈՒՊՈԼԻՍ

### ՔԱՂՔԻՆ ԱԶԳԱՅԻՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐՆ ՈՒ ՎԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ

(Տես յէջ 335)

« 1748 դեկտեմբ., 42ին Էլիզաբետան .

Հասդատեց Պատուելի Քաղաքըն իրեքումն ալ վասն շապրանաւն սէպն , օր օրիդի ըլայ <sup>1</sup>, ընտօր վերն զբած է այսինքն 1744 և ճնորում պիտոյ աւքո- զըն 42 մճրի : Բայց բամզակ և գոսան <sup>2</sup> և զըպազըն ու երկաթն կապ չէ , զան ըսլուատ էյ . բայց պի կցիլ 1749 էն , բրիմայ պի կցիլ : Եւ այս ալ զիտացիլի եւ կասպիլ օր մէկնիմէկ Աղաշան կամ Աղաշի մանշը չի անէ շապրայ 3 կամ 2 աւուրով արաշ . ու թէ օր անէյ ալ նայ լընան <sup>3</sup> տեղին վրայ անէ . զէ զըսլի օր մարդ զընէ խորդութիւնն մէկնիմէկ շապրացին վրայ և չի աւըրէ , թէ օր գրտնուն վազայներն նայ այնպիսին պիտոյ ճուրում անպատճառ 42 մճրի Պատուելի զընանին : Եւ ինչու օր չի հնազանդիլ վաղային նայ , պիտոյ Ա . Սարբարին ալ , իրեն ամնզրութեանը գորայ : Ա- նոր կու գրիլ օր հասդատ ըլայ » :

1. Գորչէ կատարուիլ , գործադրուել , կը նշանակէ :

2. Կատա հունգարերէն է , մանգազ , կը նշանակէ :

3. Ճիշդ , յատուկ , սեպհական .

Առեւտրի վրաններուն վրայօք 1738ին ու 1738ին դրուած և 1746ին և 1748ին հաստատուած օրէնքը՝ 1750, դեկտ. 16ին խոստացուեցաւ . ու ըսուեցաւ որ թէպէտ մինչեւ հիմայ հրամանէն դուրս սմանք երկերկու առեւտրոց վրան ունեցած են ու վարչութիւնն աշք դոցած է այս բանիս, սակայն այսուհետեւ 1744ին հրամանին դէմ ընողն՝ այսինքն՝ երկու վրանով քաղողը — 24 հունգարական ֆիօրին տուգանք պիտ'որ վճարէ ։ — Քաղաքային վարչութիւնն՝ այս օրէնքին վրայ հսկելը Սարբութին ու իր Ազաշաներուն յանձնեց. եւ իրենց լիակատար իշխանութիւն տուաւ, թէ որ իմանան, որ մէկն օրէնքին դէմ ընելով՝ երկու վրանի մէջ առուտար կ'ընէ, անմիջապէս բռնել ու տուգանքն իրեն վճարել տան։ Օրէնքութիւնն ան ալ կ'աւելցընէ, որ եթէ իմացուի, թէ մէկու մը համար վերատեսուչները նըսկատմունք ընելով, ըրածին աշք դոցած են, այն ատեն նոյն ինքն Սարբուտան, կամ Ազաշան, կամ ծառան պիտ'որ զանեն իրենց արժանաւոր պատիքը։

Այս օրինադրութեան մէջ ան ալ կայ. որ եթէ Սարբուտան եւ կամ իր ծառան որ և է քաղաքացոյ հրամայեր, որ տեղէն ելլէ ու օգնէ զիրանը վար առնելու ու քաղաքացին չհնազանդի, այն ատեն ասիկայ երեք հունգարական ֆիօրին տուգանք վճարէ։

Ահա օրէնքութիւնն ըստ արձանագրութեան։

#### « 1750 Դեկտեմբերի 16. Էլիգարեկան։

Հասդատութիւն էղաւ Պատուէլի զլցնածըն Ա. Պիրովինը և Պատուելի Ազաշանունը և Պատուելի Ա. Սարբութինը և իրեն հրամանոցը Ազաշանունը, ինչպէս կապահըս այսինքն շագրանուն կողմանէ, օր հասդատած էղիէ 1744. և գօնֆիրմօլադ արած էյ 1746 և 1848ին, նայ հիմիկալ գօնֆիրմօլադ արինք, օր վօլոր ինչշլաս քալիէ կապէն և հրամանէն դուա այսինքն շաղրայօլ, նայ ինչվան ի այսօր պօշարաւ, ինչվանի հօս զամէնքը։ Բայց Զ հիմիկուցէն ինտան վօլոր քալէ վերոյգրեալ 1744ին կապէն զուա ընտօր օր կու գրէ ի հօն և հասդատիլ է Պ. զլցնածը և քաղաքն թէ Ազաշայ և թէ օգիկայ քաղերցի և կոփէ ըզհամանը նայ, պիտայ ճուրում 24 մաճրի. և այս ճուրումը պիկայ, կէսն Պատուելի զլցնածին և կէսն Ա. Սարբութինը Սընտկին այսինքն քաղերին։ Եւ այս կապը և հրամանը տված է Պատուելի Ա. Սարբութին և իրեն հրամանոց աղաշանուն հէտն, օր ըզիօլ իմանային որ այս կապէս դուս քալիէ նայ, կարաս ինմէտիապէ ՝ արնու զնուրումն և օչ մարդու նալ օլէկիապէ չի անէ. զէ իմացուի Պատուելի զլցնածին դիմաց, օր

1. Առաջինը լեհերէն իսկ երկրորդը լատիներէն է. կը նշանակեն՝ անմիջապէս, շուտով։

2. Զեմ գիտեր թէ ինչ կը նշանակէ, իմաստը գուցէ ան է, որ մարդու մըն ալ աշք չգոցէ, կամ շըլայ թէ շտեսնելու զարնէ կամ ներէ։

մարդու մօսէ ըզնուրամը շիարիլ և ակընճօվ անցուցիլէ ու սուսկէցիլէ, նայ պիտոյ զնուրումն Ա. Սարլաղան կամ այնպիսի աղաղան և փաղահը, որ դուռ շիտոյ նայ : Եւ զաս ալ, որ թէ օր հրամայէր Ա. Սարլաղան կամ վատահները քաղաքացոց հիում, օր էլին վեր, օր ալըրին շաղրայ կամ ճուրում արնուն և չի հընազանգողն պիտոյ նուրում Յ մանրի :

Գիտենք, որ մնահասառթիւնն ու մնալաճառառթիւնը ի սկզբանէ հետէ շընորհուած էր Պաշտպաղովի, միայն թէ այս պայմանաւ, որ անասնոց լեզուն զգեսակը պիտի մանէր : Ցորչափ ժամանակ որ քաղաքն այս արուեստին դորձածութեան իրաւունքը տէրութենէն վարձու կը բռնէր, իր հայուին կը բանեցըներ զայն, և այս բաւական ժամանակ : Բայց երբ նոյնը տէրութենէն փրկանաւորեց, տեսնելով որ ասոր հոգատարութիւնը շատ զժուարութիւններ կը պատճառէ, մասնաւորաց վարձու տուաւ . և ասով զինացաւութենէ մ'ազստեցաւ :

Մուհասառութեան ու մնալաճառառթեան նկատմանը արդէն կը դանենք իսել մը օրէնքներ ու կարդարութիւններ քաղաքին արձանազրութեանցը մէջ : — Յիշեալ տարին, քաղաքային վարչութիւնը մնահասառթեան իրաւունք չորս հոգույ կու տայ վարձու — մէկ—տարուան մը — քառասուն ֆիօրինով : Եւ զաս անո՞ր համար՝ վասն զի թէպէտ աւելի տուող ալ կար, բայց նկատելով զան, թէ ասոնց նախընթաց տարինները շատ կորուսա ըրած են մը ահասառութեան մէջ, այս բանս ի նկատի առաւ :

Սակայն զիանալու ենք, որ միայն գուար ու մեծազոյն անասուններ կը արելու իրաւունքը ծախած էր իրենց քաղաքն . ինչու որ փոքրագոյն անասուններ կարել ու անոնց միսը ծախել ամէն քաղաքացոց — բնակինապէս ուրշեալ օրինաց սահմանին մէջ — հրաման կար : Ասպէս օրինակի աղափառ . — 1. այծու միս ամէն քաղաքացի կրնար ծախել՝ մեծ շափով, ամէն օր, իսկ պզափի շափով կամ կոտրով՝ միայն շաբաթ օրերը : Ա՛ն, որ շաբթօւան միջոցին մէջ, պզափի շափով ծախէր, պատիժ պիսա՞որ վճարէր 50 ստակ : Աս ստակին կէսը խօրհղանոցին ու կէսը՝ մնալաճառաներունն էր : 2. Գառնուկի միս հրաման կար ծախելու ամէն քաղաքացոց, ամէն օր, թէ պզափիկ ու թէ մեծ շափով, միայն թէ ամէն մէկ զառնի համար մէկ ստակ վճարուելու էր : 3. Ռշաբարի ու խոյի միս ամենեւին ծախելու հրաման ըրկար, ինչպէս քաղաքացոց, ևս առակել օտարի :

Մսահասներուն համար յաջորդ օրէնքները կային . 1. Ամէն մնալաճառ լաւ ու թարմ միս պէտք էր որ ծախու հանէր : Ա՛ն որ ասոր մէջ զանցառութիւն ընէր, կարած գուարին կաշին իրմէն կ'առնուէր, իբրեւ տուզանք : 2. Մսահաստը՝ առտուանց ծախուելու անասունը՝ իրիկուան պէտք էր մորթել . և իրիկուն ծախուելի միսը՝ առտու պէտք էր քերթել . և թէ նոր մորթած անասնոյ, կամ տաք միս ծախէր, մէկ հունգարական ֆիօրին պատիժ կը վճարէր : 3. Շաբաթ օրերն — որ տօնավաճառի օր էր — մէկ ֆունտ միսը, կէս ստրկով աժան պէտք էին ծախել մնալաճառք : — Ասոնց համար

կը սահմանուի զարձեալ . 4. որ ծախելու համար միշտ բաւական , մանաւանդ թէ աւելի միս ունենան պատրաստ : Այսէ զատ օրէնք կը տրուի մասհատ ներուն 5. որ շըլլայ թէ թողուն գնչուներն – որոնք ընդհանրապէս , պիղծ համարուած էին – որ բերեն միսը խանութը . և ոչ այ անասնոյն մորթուելու տեսքն , մասհատին օգնեն – ինչպէս որ մինչև հիմակ եղած էր , կ'ըսէ օրէնքը – որովհետեւ եթէ որ և է մասհատին քոյլ գնչու մը տեսնուի , մասհանառը մէկ հունգարական ֆիօրին տուվանց պիստի վճարէ :

Հաստատեց վարչութիւնը , նաև խոզի միս ծախելու կերպը : Որովհետեւ որ և է քաղաքացւոյ ամէն առեն հրաման կար խոզի միս ծախելու , անոր համար օտարք , ո՛չ տօնավաճախ և ո՛չ ուրիշ օր կրնային պղտիկ շափով ծախել , հապա միայն մեծ շափով , այսինքն ամբողջ խոզը կամ խոզին ամոռից գիրուցը (lardo) :

Տեսնենք ասոնց նկատմամբ եղած որոշունքներն ըստ տարեգրին :

« 1745 ուլիսի 43 ին Ելիզարէդան .

Եղաւ հասպատութիւնն վասն խասափչոցըն եւ խանութին սէպն .

4ում . Ֆրկըստիգդ<sup>1</sup> արաւ չորս խասափչին 40 մանարի հախ + խանութին սէպն , մինչև տարիին : Եւ անունը խասափչոցը կու գտվի . Ա. Խաշիկըն Քելեանց , Դանէլն , և Գրիգորն Հանգօյին . և Լուքուն Սհակի . և իրենք իրենց կամօցն կու կապիին . և աէր քաղաքն նայեց վասն թէ ըզանցած տարբաղընուն զէնը օր արիլին նայ , անոր սէպըն թօղաւ 40 մանրօվ , կար քաղըրցի , օր աւելօց ալ հախ կու տար :

5ում . Ամէն մէկ քաղդքցուն պիլայ ըլզօպօտ ածու միս ծախելու գոչօլ<sup>2</sup> , ամէն օր , և շաբադ օրն շարեկօլ<sup>3</sup> : Տարը թէ օր զըտվէր մարդ օր շարպեն մէջ կըսրէր կամ ծախէր շարեկօլ , նայ պիտոյ ճուրում 50 պան : Եւ զայս ճուրումն պիլայ զըլնամին և կէսն խասափչոցըն :

6ում . Գարի միս ըլզօպօտ էյ ծախելու հի որ մէկ քաղդքցուն , թէ շարպենը մէջ և թէ շաբադ օրն , թէ շարեկօլ և թէ ընտրեկ . տարը պիտոյ 4 պան , մէկ զարին սէպն . և պանը պիլայ քաղըրինը :

7ում . Օչիսըրի և կամ պէրպիջի<sup>4</sup> միս ըլզօպօտ չի պիլայ ծախելու քաղըրն այսինքն . ոչ մէկ քաղդքցու , ան ալ ինգապ<sup>5</sup> օտրին :

8ում . Խասափչին , հի օր մէկն ունենայ աղէկ միս անէլու և չի անօղն պիտոյ ճուրում զկաշին զան տալիքինը :

9ում . Որ խասափչին օր միս ուզենայ ծախելու նայ , որ միսն օր ծախէր

1. Fogadni. Հունգարերէն է , կը նշանակէ՝ վարձել , վարձու բռնել :

2. Կարծեմ , անասնոյն կէսը կը նշանակէ :

3. Անասնոյն մէկ շորորդական մասն է=շորեք :

4. Հունգարերէն եօթեծ բառն է . կը նշանակէ՝ խոյ :

5. Հունգարերէն է , մանաւանդ թէ , ևս առաւել :

արվատուն նայ, զան միսըն իրիկունը քերթէ. և օր միսըն օր իրիկունը ծախելու ուղենայ նայ, զայն արվատուն քերթէյ: Եւ թէ օր հանդպէր օգկայ ցեղ նայ, տայ ի ճուղում և մճրի. այսինքն օր ապրզաք ծախէր զժիսն:

7ում. Շաբագ օրն ունենան ¼<sub>2</sub> պանօվ ալ աժան ծախելու ֆունդ միսէն: Եւ միս ունենան տեսովզ 1. բայց ¼ խասափշին Գ. տաւար ունէնայ քերթելու. և թէ պէտք ըլայ նայ, աւելօցն աղ անէյ. նայ որն որ շաբդինը մէջ կու մրտնու և մինչև իրիկուն ամէնը ¼<sub>2</sub> պանօվ պի ծախլի ալ աժան ֆունդ միսըն:

8ում. Աս ալ հասդատեց Պատուելի դընանըն, որ ծինկան չի զտլի, օր միս բերէ խամսւթըն. և ոչ քերթելուն ժամանակըն ընկերէ խասափշոցըն քերթելու, ինչպէս ինչլաս եղիկէ. զէ հի օր խասափշուն մօտ օր տեսնը վէր նայ ճուղում և մճրի պիլայ անպատճար:

Սիւն Տասումին հասդատեց Պատուելի Դընանըն վասն խօզբմսին ծախէրուն սէպըն, այսինքն՝ օտար մարդիկոց կամ՝ քաղքցոց ֆունդով ըսլօպօտ չի պիլայ ծախէլու օչ պազրի աւուր և օչ օգկայ աւուր. միայն ընդպէկ. տարը մեր քաղքցոցըն բազօպօտ պիլայ ֆունդով ծախելու: —

Ամենէն շատ գործ ունեցած է քաղաքային վարչութիւնը վարձակալներուն և աւարառուներուն հետ: Ինչպէս Ելրոպայի ամէն տէրութեանց, անան ալ ի մասնաւորի Հունվարից մէջ աւարառուներուն լիճակը շատ գէշ էր: Աւատականներն՝ իրենց տէրերուն գրեթէ ասորուկները՝ գերիներն եղած էին: Խսկ վարձակալները պէտք էին օրոշեալ օրեր իրենց կալուածատէրերուն ձրի ծառայութիւն ընել. ու չէ թէ միայն, ինք վարձակալը միայն, այլ նաև կինն ու զակըները. ասոր բնական հետևութիւնն ան էր, որ թէ մէկն ու թէ մէկալն այնպէս կը նկարէին իրենց տէրերն, իրեր պզսիկ բռնաւոր մը, իրեր զահիճ մը:

Թէպէտ ազգայինք ալ միշտ ցուցուցած են, որ ազատորեար են, սակայն իրենց ստորակարգելոցն ու վարձակալացը հետ երբէք այն խստութեամբ չէին վարուէր, ինչպէս իրենց շրջակայ ազգերը:

#### 1. Բաւական, ըստ բաւականի:

Շարայարձիկ

Ա. Փիփաս.

